ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յոթերորդ գումարման Ազգային ժողովի հինգերորդ նստաշրջանի ավարտից հետո գումարվել է 2 արտահերթ նստաշրջան. 1-ը՝ դեկտեմբերի 28-ին, մյուսը՝ դեկտեմբերի 29-ին: Երկու արտահերթ նստաշրջանները նախաձեռնել են Ազգային ժողովի պատգամավորները:

Արտահերթ նստաշրջանների ընթացքում Ազգային ժողովն ընդունել է 17 օրենք, որոնցից 5-ի հեղինակը Կառավարությունն է, 8-ը «Իմ քայլը» խմբակցությունը, իսկ 4-ինը Ազգային ժողովի պատգամավորները:

Ընդունված օրենքներից 1-ինը գլխադասային է համարվել Առողջապահության եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 10-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը իսկ 5-ինը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը:

Արտահերթ նստաշրջանների ընթացքում Ազգային ժողովը՝

- ընտրեց Հաշվեքննիչ պալատի մեկ անդամ (Կարեն Առուստամյան),

- դադարեցրեց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները: